Ջատագովության երկարաժամկետ ռազմավարություն.

ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրադրության բարելավմանն ուղղված

Ներածական մաս 1

Հավասարություն և խտրականության արգելք 3

Ատելության հիմքով հանցագործություններ և ատելության խոսք 8

Գենդերի իրավական ճանաչում և գենդերի փոփոխության գործընթացներ 12

Խոշտանգումներից, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունք 16

Ընտանեկան բռնություն սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով 19

Գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց խնդիրները պարտադիր զինվորական ծառայության ընթացքում 22

Քրեակատարողական հիմնարկներում պայմաններ ԼԳԲՏ անձանց համար 26

Հավելված 30

Ներածական մաս

Սույն ռազմավարությունը սահմանում է Հայաստանում ԼԳԲՏ[1] (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր) անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում առկա առաջնահերթ խնդիրները և դրանց հասցեագրմանն ուղղված ադվոկացիոն ուղղությունները և գործողությունները, որոնք կնպաստեն Հայաստանում ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների ամբողջական պաշտպանությանը:

Խնդիրների առանձնացումը և առաջնահերթությունների սահմանումը հիմնված է Հայաստանում ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների ոտնահարումների արձանագրված դեպքերի, դրանց հիման վրա ԼԳԲՏ անձանց իրավունքների իրավիճակի նկարագրմանն ուղղված զեկույցների և իրականացված հետազոտությունների տվյալների վրա[2]:

ԼԳԲՏ անձանց պաշտպանությանն ուղղված ջատագովության պլանը քննարկում է հետևյալ ուղղությունները.

- Հավասարություն և խտրականության արգելք,
- Ատելության հիմքով հանցագործությունների և ատելության խոսքի արգելք,
- Գենդերի իրավական ճանաչում և գենդերի փոփոխության գործընթացներ,
- Խոշտանգումների, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելք՝ ներառյալ կոնվերսիոն թերապիաների, «ուղղիչ» բռնաբարության, ընտանեկան բռնություն ՍԿԳԻ[3]-ի հիմքով, ոստիկանական ճնշումներ, ԲԳՏ[4] անձանց խնդիրները բանակում, Քրեակատարողական հիմնարկների պայմանները ԼԳԲՏ մարդկանց համար:

Անկասկած է, որ ԼԳԲՏ մարդկանց իրավունքների ամբողջական պաշտպանությանը հնարավոր է հասնել միայն հենց ԼԳԲՏ համայնքի հզորացմամբ և հայաստանյան հասարակությունում իրազեկվածության բարձրացման գործողությունների միջոցով: Այնուամենայնիվ, ադվոկացիոն առաջնահերթությունները և մարտավարությունները, որոնց անդրադառնում ենք այս փաստաթղթում, կարիք ունեն իրականացվել վերջիններիս հետ համահունչ՝ համատեղելով քաղաքացիական հասարակության և իրավապաշտպան այլ կազմակերպությունների ջանքերը ամբողջական պաշտպանության հասնելու ճանապարհին:

Այս փաստաթուղթը գործիք է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար, որոնք գործունեություն են ծավալում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում և այդ ընթացքում հասցեավորում են նաև անձանց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության բացառումը: ՔՀԿ-ները կարող են սույն փաստաթղթից օգտվել որպես ուղենիշ նշյալ խնդիրների ուղղությամբ ջատագովության ճանապարհին, ինչպես նաև կարող են ստորագրությամբ միանալ՝ հաստատելով իրենց համաձայնությունն ու աջակցությունը փաստաթղթում տեղ գտած ռազմավարական ուղղություններով նախատեսված քայլերին:

Ռազմավարական ուղղություններով նախատեսված որոշ գործողությունների իրականացման համար պետք է նախատեսել առավել երկար ժամկետ, քանի որ դրանք ենթադրում են մինչ այդ կատարված օրենսդրական կարգավորումների ընդունում:

---

[1] Սույն փաստաթղթում կիրառվում է ԼԳԲՏ եզրը, որը ներառական է բոլոր ինքնությունների համար՝ ներառյալ ինտերսեքս:
[2] ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրադրության մասին զեկույցները և հետազոտությունները ներկայացված են Հավելվածում:
[3] սեռական կողմնորոշում և գենդերային ինքնություն
[4] բիսեքսուալ, գեյ և տրանսգենդեր

Հայաստանը երկրորդ վատագույն երկիրն է Եվրոպայում ԼԳԲՏ անձանց պաշտպանության օրենքների առկայության և քաղաքականությունների առումով[5] և կարևոր է իրականացնել շարունակական ջատագովություն իրավական պաշտպանության իրավիճակի բարելավման ուղղությամբ:

Սույն երկարաժամկետ ռազմավարությունը կառուցված է հետևյալ տրամաբանությամբ.

- Հիմնական ուղղության անվանում
- Համատեքստի և հիմնախնդրի հակիրճ նկարագրություն
- Ենթակետեր ու ենթանպատակներ, որոնք ենթադրում են ջատագովության ուղղություններ և/կամ գործողություններ

[5] ILGA Europe, Rainbow Europe Map 2018

Հավասարություն և խտրականության արգելք

Համատեքստ և հիմնախնդիր

Հայաստանի ԼԳԲՏ անձանց շահերի պաշտպանությամբ զբաղվող և այլ իրավապաշտպան կազմակերպությունները շարունակական արձանագրում են սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության դրսևորումներ, որը պայմանավորված է հասարակության կողմից ԼԳԲՏ անձանց նկատմամբ բացասական սոցիալական դիրքորոշումներով և պետության կողմից խնդրին պատշաճ արձագանք տալու պատրաստակամության բացակայությամբ և բռնությունն ու խտրականությունը խրախուսող գործելաոճով և խոսքով:

Միջազգային իրավունքում խտրականությունը սահմանվում է որպես «նմանատիպ իրավիճակներում մարդկանց նկատմամբ տարբերակված մոտեցում՝ առանց որևէ օբյեկտիվ պատճառների կամ հիմնավորված բացատրության»[6]: Ինչևէ, հայաստանյան համատեքստում նման ձևակերպում բացակայում է և՛ իրավական համատեքստում, և՛ իրավապահ մարմինների պրակտիկայում: Բացակայում է նաև հստակ հակախտրականության ապահովում ՀՀ օրենսդրությունում, որը երաշխիքներ կստեղծի խտրականության բացառման համար կամ կապահովի խտրականության ենթարկված անձանց խախտված իրավունքների վերականգնումը[7]:

Խտրականության ընդհանուր արգելքը նշված է ՀՀ Սահմանադրությունում, որն, ունենալով լայն սահմանում, արգելում է խտրականության դրսևորումը ցանկացած հիմքով՝ ներառյալ «անձնական և սոցիալական հանգամանքները»[8]: Հետևաբար, ՀՀ Սահմանդրությունն ոչ անմիջականորեն արգելում է սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականությունը: Սակայն, իրավունքի զարգացման պատմությունն ու դատական պրակտիկան փաստում են, որ առկա է ՀՀ Սահմանադրության անմիջականորեն կիրառման խնդիր: Հետևաբար, այն կրում է միայն դեկլարատիվ բնույթ: Սահմանադրական այս դրույթի կիրառումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել մի շարք միջոցներ, որոնցից է խտրականության կանխարգելման և պատժի համար իրավական արդյունավետ մեխանիզմների նախատեսումը:

Սահմանադրության փոփոխության գործընթացը բավականին խրթին է: Սահմանադրությունը նաև չի սահմանում, որ վավերացրած միջազգային պայմանագրերն ունեն սահմանադրական կարգավիճակ, սակայն ունեն հիերարխիկ բնույթ օրենքների նկատմամբ[9] և ՀՀ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավական ուժ[10]: Ինչևէ, մարդու իրավունքների միջազային պայմանագրերը հաշվի են առնվում Սահմանադրությամբ ամրագրված հիմնային իրավունքների մեկնաբանման ընթացքում: Հետևաբար, ամենահեշտ և արդյունավետ մոտեցումն ենթադրում է ջատագովել խտրականության արգելք նախատեսող Սահմանադրական դրույթի այնպիսի մեկնաբանման համար, որը սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը համարում է խտրականությունից պաշտպանված հիմքեր:

Խտրականության արգելքի առանձին և համապարփակ օրենսդրության բացակայությունը հանգեցնում է բոլոր ՀՀ քաղաքացիների, այդ թվում նաև՝ ԼԳԲՏ անձանց պաշտպանության արդյունավետ միջոցների բացակայությանը: Հետևաբար, խտրականության բոլոր ձևերը բացառող համապարփակ օրենսդրությունը, որը ներառում է սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը որպես պաշտպանված հիմքեր և նախատեսում է խտրականությունից պաշտպանության արդյունավետ և գործուն մեխանիզմներ՝ ներառյալ հստակ և արդյունավետ գործառույթներով անկախ մարմնի առկայությունը, հիմնային պայման են ԼԳԲՏ անձանց

---

[6] Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի, #40094/05, 02/10/2012, §199.
[7] Society Without Violence, *The Human Rights Situation of LGBTI Individuals in Armenia. A Practical Assessment*, Armenia, June 2016, p. 18, available from: https://ge.boell.org/en/2016/06/16/human-rights-situation-lgbti-individuals-armenia-practical-assessment
[8] ՀՀ Սահմանադրություն, Հոդված 29
[9] *Նույն տեղում*, Հոդված 5.3.
[10] *Նույն տեղում*, Հոդված 5.1

իրավունքների պաշտպանության և հավասարության ապահովման հարցում: «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը[11], առաջարկված ՀՀ արդարադատության նախարարության կողմից դրվել է շրջանառության մեջ, որի հետ կապված ջատագովության գործողությունները կարևոր և օրակարգային են իրավապաշտպան կազմակերպությունների համար:

Խտրականության արգելքի, դրա կանխարգելման, դեպքերի արդյունավետ քննության մեխանիզմներ նախատեսող օրենսդրության մշակման փուլում անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ, համաձայն հաղորդված դեպքերի քանակի, ԼԳԲՏ անձինք առավելապես խտրականության են բախվում առողջապահության, ծառայությունների մատուցման, կրթության և աշխատանքի ոլորտներում: Միևնույն ժամանակ այս ոլորտներում խնդրային է խտրականության՝ առաջին հայացքից ապացուցման խնդիրը, ինչի արդյունքում քիչ են դեպքերը, երբ տուժողները դիմել են իրավական պաշտպանության միջոցների: Դրանով պայմանավորված պետք է սահմանվեն որոշակի առաջնահերթություններ ոլորտային օրենսդրական կարգավորումներում:

Հայաստանում հանրակրթական դպրոցներում ԼԳԲՏ անձինք ենթարկվում են ճնշումների, ծաղրի, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ոչ միայն աշակերտների, այլ նաև ուսուցիչների և տնօրենների կողմից: Այս մասին են վկայում խտրականության դեմ պայքարի ոլորտում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտությունների արդյունքները: Մասնավորապես «Հասարակություն առանց բռնության» հասարակական կազմակերպության կողմից իրականացվել է հետազոտություն կրթական հաստատությունների իրավիճակի վերաբերյալ, որում հետազոտության մասնակիցները նշել են, թե ինչպես են դպրոցում ենթարկվել ճնշումների ինչպես դասավանդողների կողմից, այնպես էլ տարեկիցների կողմից[12]: Փինք իրավապաշտպան ՀԿ-ի կողմից ՀՀ կրթական հաստատություններում արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի և բռնության վերաբերյալ ԼԳԲՏ անձանց շրջանում իրականացված հարցման արդյունքները հետևյալն են եղել՝ 49 հարցվածներից գրեթե 82%-ը նշել է, որ կրթական հաստատությունում ենթարկվել է բուլինգի, ընդ որում, մոտ 35%-ը բազմիցս է ենթարկվել[13]: Ճնշումները դրսևորվում են տարբեր կերպով՝ վիրավորական արտահայտություններից մինչև ֆիզիկական բռնություն և շորթում:

Աշխատանքային օրենսգիրքը (հոդված 3, մաս 3, հոդված 114, մաս 4, կետ 4, հոդված 180, մաս 3), Կրթության մասին օրենքը (հոդված 6, մաս 1), Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին օրենքը (հոդված 4), Գնումների մասին օրենքը (հոդված 3, մաս 2, կետ 1) նախատեսում են խտրականության արգելքի վերաբերյալ դրույթներ: Միևնույն ժամանակ, խտրականության սահմանման, տեսակների, կանխարգելման և քննության արդյունավետ մեխանիզմների, ինչպես նաև խտրականության դեպքը նույնականացնող անկախ մարմնի բացակայության պայմաններում նշյալ օրենսդրական ակտերի առկայությունը բավարար չէ նշյալ ոլորտներում խտրականության բացառման համար:

Ենթակետեր

1. ՀՀ Սահմանադրության հոդված 29-ի մեկնաբանությունը ցույց է տալիս, որ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ներառվում են անձնական բնույթի այլ հանգամանքների մեջ՝ որպես պաշտպանված հիմքեր:

---

[11] «ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ», «ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ, հասանելի է՝ https://www.e-draft.am/projects/770

[12] Հասարակություն առանց բռնության ՀԿ, «Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների գործնական գնահատում», մարտ 2016թ.

[13] Փինք ՀԿ, ԼԳԲՏ անձանց զգալի մեծամասնությունը ուս. հաստատությունում ենթարկվում է բուլինգի. լռության օր՝ հանուն աշակերտների ապահով ուսման, հասանելի է՝ http://www.pinkarmenia.org/hy/2017/04/dos2017/

2. Ընդունել խտրականությունն արգելող առանձին համապարփակ օրենսդրություն, որն ապահովում է նաև սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականությունից պաշտպանությունը:
3. Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության բացառումը կյանքի առաձին ոլորտներում՝ մասնավորապես առողջապահությունը, ծառայությունների մատուցման ոլորտը, կրթությունը և աշխատանքը:

1. ՀՀ Սահմանադրության հոդված 29-ի մեկնաբանությունը ցույց է տալիս, որ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ներառվում են անձնական բնույթի այլ հանգամանքների մեջ՝ որպես պաշտպանված հիմքեր:

Նպատակ

Սահմանադրության խտրականությունն արգելող օրենքը կիրառվում է սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության դեպքերում:

Ենթանպատակներ

- Հայաստանի դատական մարմինների կողմից հաստատված նախադեպային մեկնաբանությունը ցույց է տալիս, որ Հոդված 29-ը ներառում է ՍԿԳԻ-ին որպես պաշտպանված հիմք:

Թիրախ խմբեր

- ՀՀ վարչական դատարան

Շահառուներ

- ԼԳԲՏ անձինք

2. Ընդունել խտրականությունն արգելող առանձին համապարփակ օրենսդրություն, որն ապահովում է նաև սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականությունից պաշտպանությունը:

Նպատակ

Ունենալ օրենսդրություն, որն արդյունավետորեն պաշտպանում է ԼԳԲՏ մարդկանց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականությունից:

Ենթանպատակներ

- Սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ներառվում են ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված «Իրավահավասարության մասին» ՀՀ օրենքում:

- «Իրավահավասարության մասին» օրենքի նախագիծը սահմանում է խտրականության բոլոր տեսակները, նախատեսում հնարավորություն հանրային շահի պաշտպանության գործերով դատարան դիմելու՝ հասարակական կազմակերպությունների իրավունքը:
- ՀՀ Կառավարությունը հաստատում է օրենքի նախագիծ, որում ՍԿԳԻ-ն նշված են պաշտպանված հիմքերի շարքում, սահմանված են խտրականության բոլոր տեսակները, նախատեսված է հնարավորություն հանրային շահի պաշտպանության գործերով դատարան դիմելու՝ հասարակական կազմակերպությունների իրավունքը:
- ՀՀ Ազգային ժողովն ընդունում է օրենք, որում ՍԿԳԻ-ն նշված է պաշտպանված հիմքերի շարքում, սահմանված են խտրականության բոլոր տեսակները, նախատեսված է հնարավորություն հանրային շահի պաշտպանության գործերով դատարան դիմելու՝ հասարակական կազմակերպությունների իրավունքը:

Թիրախ խմբեր

- ՀՀ կառավարություն
- ՀՀ արդարադատության նախարարություն
- ՀՀ Ազգային ժողով

Շահառուներ

- ԼԳԲՏ անձինք

3. Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության բացառումը կյանքի առաձին ոլորտներում՝ մասնավորապես առողջապահությունը, ծառայությունների մատուցման ոլորտը, կրթությունը և աշխատանքը:

Նպատակ

Աշխատանքային իրավահարաբերություններում, կրթական, առողջապահական, ինչպես նաև ծառայությունների մատուցման ոլորտում ԼԳԲՏ անձանց հանդեպ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության արդյունավետ կանխարգելման և քննության մեխանիզմները նախատեսված են օրենքով և գործում են արդյունավետորեն:

Ենթանպատակներ

- Խտրականության դեմ օրենքում նախատեսել աշխատանքային իրավահարաբերություններում, կրթական, առողջապահական, ինչպես նաև ծառայությունների մատուցման ոլորտում խտրականություն բացառելու մեխանիզմներ:
- Առողջապահության նախարարությանն առաջարկել կազմակերպել վերապատրաստում բժշկական հաստատությունների աշխատակիցների համար խոցելի խմբերի հետ աշխատանքի վերաբերյալ, ինչպես նաև իրականացնել հետագա վերահսկողություն բժշկական հաստատություններում՝ առողջապահական ծառայություններին հասանելիություն ապահովելու նպատակով՝ հետազոտությունների արդյունքում հավաքագրված տվյալների հիման վրա (ներառյալ խտրականության դեմ օրենքում նախատեսված մեխանիզմների վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելը):

- Կրթության և գիտության նախարարությանն առաջարկել կրթական հաստատությունների աշխատակիցների համար իրականացնել վերապատրաստում ԼԳԲՏ անձանց հետ աշխատանքի վերաբերյալ, ինչպես նաև կրթական ծրագրերում ներառել անձանց բազմազանության, իրավահավասարության, խտրականության արգելքի վերաբերյալ նյութեր՝ կրթական միջավայրում արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքը բացառելու և սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով կրթական համակարգից դուրս մնալու հարցը կարգավորելու ուղղությամբ՝ հետազոտությունների արդյունքում հավաքագրված տվյալների հիման վրա (ներառյալ խտրականության դեմ օրենքում նախատեսված մեխանիզմների վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելը):
- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը ներկայացնել առաջարկ համատիրությունների միջոցով աշխատողների իրավունքների պաշտպանության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու վերաբերյալ՝ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով աշխատանքից հեռացման կամ չընդունման պրակտիկան բացառելու ուղղությամբ՝ հետազոտություններ արդյունքում հավաքագրված տվյալների հիման վրա (ներառյալ խտրականության դեմ օրենքում նախատեսված մեխանիզմների վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելը):
- Ներկայացնել առաջարկներ ըստ ոլորտների սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունը ծառայությունների մատուցման ընթացքում բացառելու համար՝ նախապես իրականացված հետազոտությունների հիման վրա:

Թիրախ խմբեր

- ՀՀ արդարադատության նախարարություն
- ՀՀ կառավարություն
- ՀՀ Ազգային ժողով
- ՀՀ առողջապահության նախարարություն
- ՀՀ կրթության և գիտության նախարարություն
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Շահառուներ

- ԼԳԲՏ անձինք
- ԼԳԲՏ անձանց հետ ասոցացվող անձինք

Ատելության հիմքով հանցագործություններ և ատելության խոսք

Համատեքստ և հիմնախնդիր

Համաձայն ԵԱՀԿ-ի ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի՝ ատելության հիմքով հացագործությունը սահմանվում է որպես քրեական հանցագործություն, որի հիմքում ընկած է կոնկրետ ատելություն կամ անհանդուրժողականություն[14]: Ատելության խոսքը սահմանվում է որպես «ցանկանցած արտահայտում, որը տարածում, հրահրում, խթանում կամ արդարացնում է ռասայական ատելությունը, քսենոֆոբիան և հակասեմիտիզմը կամ ատելության ձևերը, որոնք հիմնված են անհանդուրժողականության վրա՝ ներառյալ անհանդուրժողականության դրսևորումը էթնոցենտրիզմի և ազգայնամոլության, փոքրամասնությունների, փախստականների կամ փախստական արմատներով անհատների նկատմամբ խտրականության և բռնության միջոցով»[15]:

Ատելությամբ և անհանդուրժողականությամբ պայմանավորված հանցագործությունները և միջադեպերը ամենօրյա իրականություն են հայաստանյան հասարակությունում[16]: ՀՀ օրենսդրությունը չի տրամադրում բազմակողմանի, հիմնային, ինչպես նյութական, այնպես էլ ընթացակարգային կարգավորումներ ատելության հիմքով հանցագործությունների կանխարգելման, հետաքննության և պատասխանատվության ենթարկելու համար:

ՀՀ քրեական օրենսդրությունը չի սահմանում ատելության հիմքով հանցագործությունների մասին որևէ հիմնային հասկացություն, մասնավորապես՝ թե ինչ է ատելության հիմքով հանցագործությունը, որոնք են պաշտպանված հիմքերը, ինչպես նույնականացնել դրանք, այդպիսի հանցագործությունների համար սահմանված պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները: Միևնույն ժամանակ առկա է միայն ՀՀ քրեական օրենսգրքի Հոդված 63-ը, որը որպես հանցագործությունների ծանրացուցիչ հանգամանք է սահմանում արարքը էթնիկական, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական ֆանատիզմի հիմքով իրականացված լինելը: Այլ կերպ ասած, պաշտպանված հատկանիշների ցուցակը չի ներառում սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը: Հետևաբար, սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով իրականացված հանցագործությունները ներառված չեն քրեական օրենսդրության մեջ և այդ հիմքերը հաշվի չեն առնվում քրեական հանցագործությունների հետաքննության ընթացքում որպես քրեորեն պատժելի արարքի շարժառիթ՝ հանցագործության և պատժի ծանարցուցիչ հանգամանք:

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ Եվրոպական հանձնաժողովի կողմից պատրաստվել է զեկույց Հայաստանում ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ, որում արնդրադարձ է կատարվել նաև անձանց սեռական կողմնորոշմամբ և/կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված հանցագործությունների արդյունավետ քննությանը[17]:

Մասնավորապես՝

1. (§ 10) ՌԱԵՀ-ն առաջարկում է, որ իշխանություններն իրենց քրեական իրավունքը, ընդհանուր առմամբ, համապատասխանեցնեն Ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարականին, ինչպես մատնանշված է նախորդ պարբերություններում, մասնավորապես՝ դրանք պետք է (1) «արգելված հիմքերի» ցանկում բացահայտորեն ներառեն մաշկի գույնը, լեզուն, ազգությունը (ինչն ընկալվում է որպես քաղաքացիություն), ազգային կամ էթնիկական ծագումը, սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը, (2) քրեականացնեն բռնությունների հրահրումը և ռասայական խտրականության հրահրումը, (3)

[14] OSCE Office for Democratic Institutions and Human Rights (ODIHR), *Hate Crime Laws: A practical Guide*, Warsaw, Poland, 2009, available from: http://hatecrime.osce.org/armenia
[15] Recommendation No. R(97)20 of the Council of Europe Committee of Ministers on "Hate Speech" 30 October 1997.
[16] Փինք ՀԿ, ԼԳԲՏ անձանց հանդեպ ատելության հիմքով հանցագործություններն ու ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումները Հայաստանում, Հայաստան, Նոյեմբեր 2016, հասանելի է՝ https://issuu.com/pinkarmenia/docs/hate_crime_monitoring_2016_hy
[17] https://www.coe.int/t/dghl/monitoring/ecri/Country-by-country/Armenia/ARM-CbC-V-2016-036-ARM.pdf

քրեականացնեն ցեղասպանության, մարդկության դեմ հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների հանրային ժխտումը, պարզունակացումը, արդարացումը կամ համակերպումը:

4. (§ 26) ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը հստակորեն ավելացվեն Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածի արգելված հիմքերի ցանկում և որ Օրենսգրքում ավելացվի դրույթ, որը հստակորեն կամրագրի հոմոֆոբ/տրանսֆոբ շարժառիթը, որպես ծանրացուցիչ հանգամանք բոլոր սովորական հանցագործությունների դեպքում:

7. (§ 54) ՌԱԵՀ-ն առաջարկում է, որ ԼԳԲՏ անձանց նկատմամբ՝ նրանց ենթադրյալ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով, կամ նրանց իրավապաշտպանների նկատմամբ հանրության շրջանում հրահրված բռնությունների և ատելության, սպառնալիքների դեպքերը քննվեն և, համապատասխանաբար, պատժվեն:

8. (§ 64) ՌԱԵՀ-ը վերստին առաջարկում է, որպեսզի քրեական իրավունքն արդյունավետորեն կիրառվի ռասիստական հողի վրա կատարված բռնությունների և դրանց հրահրման բոլոր դեպքերում, այդ թվում և հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի միջադեպերի հետ կապված, մասնավորապես՝ ուշադրությունը բևեռելով իրավապահների կողմից օրենքի նկատմամբ հարգանքին: Ավելին, իշխանությունները պետք է ամենասկզբից բռնի միջադեպերի քննության և դրանց հետևող բոլոր դատական վարույթների ժամանակ ենթադրյալ ռասիստական և/կամ հոմոֆոբ/տրանսֆոբ շարժառիթը դարձնեն քննության բաղկացուցիչ մասը:

ՀՀ քրեական օրենսգրքի Հոդված 226-ը, որը կարգավորում է որոշակի հատկանիշներով անձանց խմբի նկատմամբ թշնամանք հարուցելը, չի նշում սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը արգելված հիմքերի շարքում: Հետևաբար, անհատի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով ատելության խոսքը չի կարգավորվում ՀՀ օրենսդրությամբ:

Ենթակետեր

1. ՍԿԳԻ-ի հիմքով ատելության հիմքով հանցագործությունների օրենսդրական կարգավորում և քննության արդյունավետ մեխանիզմների առկայություն:
2. ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության խոսքը կարգավորող օրենսդրության և կանխարգելման մեխանիզմների առկայություն:

1. ՍԿԳԻ-ի հիմքով ատելության հիմքով հանցագործությունների օրենսդրական կարգավորում և քննության արդյունավետ մեխանիզմների առկայություն:

Նպատակ

ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունները սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով կամ արտահայտմամբ արդյունավետորեն հետաքննվում են և կանխարգելվում:

Ենթանպատակներ

- ՍԿԳԻ-ով պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունների օրենսդրական կարգավորում, մասնավորապես՝ ատելության հիմքով հանցագործություններն սահմանված են ՀՀ Քրեական օրենսգրքում և սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ներառված են որպես ծանրացնող հանգամանքներ:

- ՀՀ Կառավարության կողմից ՀՀ Քրեական օրենսգրքի փոփոխության նախագծի հաստատում, որով որպես ծանրացնող հանգամանք է նախատեսված արարքը սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով կատարված լինելը:
- ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ Քրեական օրենսգրքի նախագծի ընդունում:

▪ Ատելության հիմքով հանցագործությունների կանխարգելմանն ուղղված հստակ քաղաքականության մշակում, մասնավորապես՝ ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների կանխարգելմանն ուղղված գործողությունների ներառում ՀՀ իրավապահ մարմինների և այլ համապատասխան պետական կառույցների օրակարգում:

▪ Ատելության հիմքով հանցագործությունների քննության առանձնահատկությունների վերաբերյալ իրավակիրառ մարմինների վերապատրաստում:

▪ Փոփոխություն «Հանրային ծառայությունների մասին» ՀՀ օրենքում, որը վերաբերում է հանրային ծառայողների վարքում՝ բոլոր հիմքերով հավասարության և անխտրական սկզբունքի հարգանքին և պահպանմանը:

Թիրախ խմբեր

▪ ՀՀ արդարադատության նախարարություն

▪ ՀՀ կառավարություն

▪ ՀՀ ազգային ժողով

▪ ՀՀ ոստիկանություն

▪ ՀՀ քննչական կոմիտե

▪ ՀՀ դատախազություն

Շահառուներ

▪ ԼԳԲՏ անձինք և ասոցացվող անձինք

2. ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատլության խոսքը կարգավորող օրենսդրության և կանխարգելման մեխանիզմների առկայություն:

Նպատակ

ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատլության խոսքը սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով կամ արտահայտմամբ արդյունավետորեն հետաքննվում են և կանխարգելվում:

Ենթանպատակներ

▪ ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան իրավական կարգավորումների առկայություն, որոնք ուղղված են ՍԿԳԻ-ի հիմքով ատելության խոսքի կարգավորմանը՝ մասնավորապես.

- ՀՀ Կառավարության կողմից օրենսդրական փոփոխությունների նախագծի հաստատում, որով սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով

ատելության խոսքի համար կնախատեսվի վարչական, քաղաքացիական և քրեական պատասխանատվություն՝ ըստ ծանրության աստիճանի:

- ՀՀ Ազգային ժողովի կողմից օրենսդրական փոփոխությունների նախագծի ընդունում, որով սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով ատելության խոսքի համար կնախատեսվի վարչական, քաղաքացիական և քրեական պատասխանատվություն՝ ըստ ծանրության աստիճանի:
- Փոփոխություն «Հեռուսատատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում, որտեղ բացառապես նշվում է արգելք առուդիո-վիզուալ հաղորդակցության, որը ներառում կամ խթանում է որևէ հիմքով խտրականություն՝ ներառյալ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով ատելության խոսքը կամ խտրականությունը:

- Փոփոխություն «Հանրային ծառայությունների մասին» ՀՀ օրենքում, որը վերաբերում է հանրային ծառայողների վարքում՝ բոլոր հիմքերով հավասարության և անխտրական սկզբունքի հարգանքին և պահպանմանը:
- Ատելության խոսքի կանխարգելմանն ուղղված քաղաքականություն, որը ներառված է պետական մարմինների օրակարգում:

Թիրախ խմբեր

- ՀՀ արդարադատության նախարարություն
- ՀՀ կառավարություն
- ՀՀ Ազգային ժողով
- Հանրային հեռուստատեսություն և ռադիո
- Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

Շահառուներ

- ԼԳԲՏ անձինք

Գենդերի իրավական ճանաչում և գենդերի փոփոխության գործընթացներ

Համատեքստ և հիմնախնդիր

Չնայած նրան, որ Հայաստանում համաձայն «Անվան փոփոխման կարգն ու պայմանները սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 26.03.2005թ. 946-Ն որոշմամբ նախատեսված «եթե անձը փաստացի կրում է իր ծննդյան գրանցման մեջ նշված անունից տարբերվող անուն» հիմքով տրանսգենդեր անձինք կարող են առանց խոչընդոտի փոխել իրենց անունը, սակայն գենդերի (սեռի) վերաբերյալ նշումների փոփոխությունը հեշտ գործընթաց չէ: ՀՀ ՔԿԱԳ մարմնի պաշտոնական դիրքորոշման համաձայն այս դրույթը բավարար է ցանկացած անուն ընտրելու համար, քանի որ ՀՀ օրենսդրությունը չի տարանջատում անուններն ըստ սեռի:

«ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 10-րդ մասի 3.1 կետի, 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ Կառավարության 25.12.1998թ. թիվ 821 որոշման համաձայն անձնագրում ամրագրված տվյալներում փոփոխություն կատարելու համար անձը պետք է ներկայացնի տվյալ փոփոխությունը հիմնավորող փաստաթուղթ: Եվ քանի որ սեռի վերաբերյալ նշումը անձնագրում պարտադիր է, ապա դրա փոփոխությունը ևս ենթադրում է որոշակի հիմնավորող փաստաթղթերի ներկայացման անհրաժեշտություն:

Քանի որ վերոնշյալ իրավական ակտերով սահմանված չէ փաստաթղթերի հստակ ցանկ, որոնք անհրաժեշտ է ներկայացնել սեռի վերաբերյալ նշումը փոփոխելու համար, ապա սեռափոխության վերաբերյալ բժշկական կամ այլ փաստաթղթի ներկայացումը բավարար է:

ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում գենդերի փոփոխության ընթացակարգ, ինչը հնարավորություն կտա անարգել՝ առանց որևէ պարտադիր բժշկական միջամտության և/կամ այդ մասին փաստաթղթեր ներկայացնելու, ինչպես նաև առանց հարկադիր ամուսնալուծության իրականացնել գենդերի վերաբերյալ նշումների փոփոխություն փաստաթղթերում:

«Գենդերի իրավական ճանաչման մասին» օրենքի ընդունումը հարկավոր է ինչպես գենդերի իրավական ճաչափման, այնպես էլ դրա հստակ ընթացակարգ սահմանելու համար՝ ներառյալ դիմումի ներկայացման կարգը, դրան ներկայացվող պահանջները, քննության ժամկետներն ու կարգը, վերադարձի և վերաքննության հնարավորությունները:

Ենթակետեր

1. Գենդերի իրավական ճանաչման համապարփակ օրենսդրություն և համապատասխան ՀՀ Կառավարության որոշումների առկայություն, որոնք կապահովեն անձը հաստատող և այլ անձնական փաստաթղթերում սեռի նշումի համապատասխան անխոչընդոտ փոփոխությունը:
2. Փոփոխություններ հարակից օրենսդրությունում, որոնք կապահովեն գենդերի փոփոխման ընթացակարգերը՝ ներառյալ սոցիալ-հոգեբանական խորհրդատվության, հորմոնային թերապիայի, սեռի փոփոխության վիրահատությունների և այլ անհրաժեշտ բժշկական ու սոցիալ-հոգեբանական աջակցության ձևերի կարգավորումները:
3. Տրանսգենդեր անձանց աջակցության համապարփակ քաղաքականության մշակում, որը կներառի համապատասխան մասնագետների պատրաստումը, մասնագիտական աջակցության ընթացակարգերը՝ մասնավորապես սոցիալ-հոգեբանական խորհրդատվության, հորմոնային թերապիայի, սեռի փոփոխության վիրահատությունների և այլ անհրաժեշտ բժշկական ու սոցիալ-հոգեբանական աջակցության ձևերի ընթացակարգերը:

1. Գենդերի իրավական ճանաչման համապարփակ օրենսդրություն և համապատասխան ՀՀ Կառավարության որոշումների առկայություն, որոնք կապահովեն անձը հաստատող և այլ անձնական փաստաթղթերում սեռի նշումի համապատասխան անխոչընդոտ փոփոխությունը:

Նպատակ

Ընդունել «Գենդերի իրավական ճանաչման մասին» օրենք և դրանից բխող կառավարության որոշումներ:

Ենթանպատակներ

- Գենդերի իրավական ճանաչման մասին օրենքի նախագծի ներկայացում ՀՀ արդարադատության նախարարությանը՝ սկսելով բանակցություններ այն կառավարության հաստատմանը ներկայացնելու համար:
- Հանրային քննարկման արդյունքում նախագծի լրամշակում և ընդունելի տարբերակով ներկայացում ՀՀ Կառավարությանը:
- ՀՀ Կառավարության կողմից գենդերի իրավական ճանաչման մասին օրենքի նախագծի հաստատում:
- ՀՀ Ազգային ժողովի կողմից գենդերի իրավական ճանաչման մասին օրենքի ընդունում:

Թիրախ խմբեր

- ՀՀ արդարադատության նախարարություն
- ՀՀ առողջապահության նախարարություն
- ՀՀ կառավարություն
- ՀՀ Ազգային ժողով

Շահառուներ

- Տրանսգենդեր անձինք

2. Փոփոխություններ հարակից օրենսդրությունում, որոնք կապահովեն գենդերի փոփոխման ընթացակարգերը՝ ներառյալ սոցիալ-հոգեբանական խորհրդատվության, հորմոնային թերապիայի, սեռի փոփոխության վիրահատությունների և այլ անհրաժեշտ բժշկական ու սոցիալ-հոգեբանական աջակցության ձևերի կարգավորումները:

Նպատակ

Հարակից օրենսդրությունում կատարված փոփոխությունների արդյունքում Գենդերի իրավական ճանաչման մասին օրենքը կիրառվում է արդյունավետորեն:

Ենթանպատակներ

- Նախագծի քննարկման հետ մեկտեղ ներկայացվում է հարակից օրենսդրական փոփոխությունների փաթեթ, ինչը ներառում է նաև սեռափոխության և այլ ընթացակարգերի վերաբերյալ կարգավորումները:

Թիրախ խմբեր

- ՀՀ արդարադատության նախարարություն
- ՀՀ առողջապահության նախարարություն
- ՀՀ կառավարություն
- ՀՀ Ազգային ժողով

Շահառուներ

- Տրանսգենդեր անձինք

3. Տրանսգենդեր անձանց աջակցության համապարփակ քաղաքականության մշակում, որը կներառի համապատասխան մասնագետների պատրաստումը, մասնագիտական աջակցության ընթացակարգերը՝ մասնավորապես սոցիալ-հոգեբանական խորհրդատվության, հորմոնային թերապիայի, սեռի փոփոխության վիրահատությունների և այլ անհրաժեշտ բժշկական ու սոցիալ-հոգեբանական աջակցության ձևերի ընթացակարգերը:

Նպատակ

Ունենալ տրանսգենդեր անձանց աջակցության համապարփակ քաղաքականություն և մեխանիզմներ:

Ենթանպատակներ

- Տրանսգենդեր անձանց աջակցությունը ներառվում է մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների պլանում:
- ՀՀ առողջապահության նախարարությունը մշակում է քաղաքականություն տրանսգենդեր անձանց աջակցության ուղղությամբ՝ ներդնելով հորմոնային թերապիայի, սեռափոխության և այլ բժշկական աջակցության մեխանիզմների ներդնումն ու որակյալ իրականացումը:
- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշակում է տրանսգենդեր անձանց սոցիալ-հոգեբանական պաշտպանվածությանն ուղղված քաղաքականություն:

Թիրախ խմբեր

- ՀՀ արդարադատության նախարարություն
- ՀՀ առողջապահության նախարարություն
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
- ՀՀ սոցիալական ապահովության ծառայություն

Շահառուներ

- Տրանսգենդեր անձինք

Խոշտանգումներից, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունք

Համատեքստ և հիմնախնդիր

Անձանց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով մարդու իրավունքների խախտումների շարքում մեծ տեղ են զբաղեցնում մասնավոր կամ ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի ոտնահարումները: Որոշ դեպքերում, սակայն, անձին ֆիզիկական կամ հոգեբանական տառապանք պատճառելու աստիճանով պայմանավորված անձինք ենթարկվում են անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի:

Կոնվերսիոն պրակտիկաների բացառում՝ ներառյալ կոնվերսիոն թերապիա, «ուղղիչ» բռնաբարություն և այլ պրակտիկաներ՝ ուղղված անձի ՍԿԳԻ-ի փոփոխությանը

Հայ հասարակությունում ԼԳԲՏ անձանց վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակի, մշակութային առանձնահատկություններից բխող մոտեցումների, ինչպես նաև տարբեր պետական և ոչ պետական մարմինների կողմից տարվող «ազգային արժեքների» անվան տակ տարվող քարոզչության արդյունքում անձանց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության բացահայտման դեպքում օգտագործվում են տարբեր միջոցներ՝ սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը փոխելու ուղղությամբ: Այս մեթոդները՝ տարբեր դրսևորումներով կիրառվել են դարեր շարունակ և հանգեցրել մարդու ինչպես հոգեկան առողջության այնպես էլ ֆիզիկական առողջության խնդիրների, երբեմն հանգեցնելով նաև մահվան:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) նշում է. «Վերականգնող կամ կոնվերսիոն թերապիան չունի որևէ բժշկական ցուցում և լուրջ սպառնալիք է ներկայացնում մարդու առողջությանը և մարդու իրավունքներին: Դրանք պետք է դատապարտվեն և ենթարկվեն համապատասխան սանկցիաների և պատիժների[18]»:

Հայաստանում այս խնդրի պրակտիկայում առկա դրսևորումների համակարգային հետազոտության բացակայության պայմաններում դժվար է փաստերի վրա հիմնված եզրահանգումներ անել, սակայն հարկ է նշել, որ ըստ արձանագրված դեպքերի, առավել հաճախ հանդիպող իրավիճակները հոգեբանի, հոգեթերապևտի կամ սեքսապաթոլոգի կողմից իրականացվող կոնվերսին թերապիայի դեպքերն են: Որոշ մասնագետներ նույնիսկ հրապարակային կերպով հայտարարում են, որ իրենք կարող են փոխել անձի սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը, իսկ ԼԳԲՏ անձանց ընտանիքի անդամները, չունենալով բավարար իրազեկվածության մակարդակ սեռականության վերաբերյալ և չգիտակցելով իրենց երեխայի համար նման թերապիայի վտանգավորության տաստիճանը, ի վերջո դիմում են այդ մասնագետներին:

Որոշ դեպքերում ընտանիքի անդամները դիմում են եկեղեցական մեթոդների: Արձանագրված դեպքերում կրոնական աստիճան զբաղեցնող անձինք վստահեցրել են, որ սատանա է մտել անձի մեջ և ամեն գնով պետք է նրան դուրս բերել: Բանը հասել է նաև ֆիզիկական բռնության:

Պարբերաբար հայտնի են դառնում նաև «ուղղիչ» բռնաբարությունների դեպքեր:

Կոնվերսիոն այս պրակտիկաները հաճախ հասնում են այնպիսի աստիճանի, որ կարող են դիտարկվել որպես անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք:

---

[18] PAHO/WHO, "Therapies" to change sexual orientation lack medical justification and threaten health https://www.paho.org/hq/index.php?option=com_content&view=article&id=6803:2012-therapies-change-sexual-orientation-lack-medical-justification-threaten-health&Itemid=1926&lang=en

ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ պայքարի կոմիտեն մտահոգություն է հայտնել կոնվերսիոն թերապիաների առկա դրսևորումների վերաբերյալ՝ որպես մարդու ֆիզիկական և հոգեկան ամբողջականության դեմ ուղղված իրավախախտումներ: Կոմիտեն միևնույն ժամանակ ներկայացրել է այն ուղղությունները, որոնցով պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն վերացնելու համար նման իրավախախտումների դեպքերը: Դրանք են, մասնավորապես, մարդկանց ֆիզիկական և անձնական անձեռնմխելիության նկատմամբ հարգանքի ապահովմանն ուղղված օրենսդրական կարգավորումների նախատեսումը, բժշկության ոլորտի մասնագետների և պաշտոնատար անձանց համար մարդու իրաունքների հարգման վերաբերյալ դասընթացների անցկացումը՝ ներառյալ մարդու ֆիզիկական և անձնական ամբողջականության վերաբերյալ, ինչպես նաև նման դեպքերում համապատասան, պատշաճ քննության իրականացումը:[19]

Ենթակետեր

1. Կոնվերսին պրակտիկաները արգելվում են օրենքով
2. Պետությունը միջոցներ է ձեռնարկում կանխարգելելու կոնվերսիոն թերապիան

1. Կոնվերսիոն պրակտիկաները արգելվում են օրենքով:

Նպատակ

ՀՀ քրեական օրենսգիրքը նախատեսում է պատասխանատվություն կոնվերսիոն թերապիայի համար, իսկ կոնվերսիոն նպատակը նախատեսված է որպես բռնաբարության ծանրացուցիչ հանգամանք:

Ենթանպատակներ

- Իրականացված հետազոտության հիման վրա ՀՀ Ազգային ժողովի կամ ՀՀ նախարարությունների միջոցով ներկայացվում է օրենսդրական փոփոխության նախագիծ՝ կոնվերսիոն թերապիայի արգելման համար համապատասխան քննություն և պատասխանատվություն նախատեսելու համար:
- Ներկայացվում է առաջարկ ՀՀ Քրեական օրեսգրքում բռնաբարության կոնվերսիոն նպատակը որպես ծանրացուցիչ հանգամանք նախատեսելու վերաբերյալ:
- ՀՀ Կառավարությունը հաստատում է ներկայացված նախագիծը:
- ՀՀ Ազգային ժողովը ընդունում է ներկայացված օրենսդրական փոփոխությունը:
- Իրավակիրառ մարմինները վերապատրաստում են անցնում՝ նույնականացնելու համար կոնվերսիոն թերապիայի դրսևորումները:

Թիրախ խմբեր

- ՀՀ Ազգային ժողով
- ՀՀ կառավարություն
- ՀՀ արդարադատության նախարարություն
- ՀՀ ոստիկանություն

[19] UN Committee Against Torture (CAT), Concluding observations on the fifth periodic report of China with respect to Hong Kong, China, 3 February 2016 https://www.refworld.org/docid/58bed9954.html

- ՀՀ դատախազություն
- ՀՀ քննչական կոմիտե

Շահառուներ

- ԼԳԲՏ անձինք

2. Պետությունը միջոցներ է ձեռնարկում կանխարգելելու կոնվերսիոն թերապիան:

Նպատակ

ԼԳԲՏ անձանց ընտանիքները չեն դիմում կոնվերսիոն թերապիայի մեթոդներին:

Ենթանպատակներ

- ՀՀ կառավարությունը՝ տարբեր իրավասու ստորաբաժանումների միջոցով ձեռնարկում է հասարակության իրազեվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ:
- Բուժախշատողների, հոգեբանների և այլ մասնագետների համար անցկացվում են դասընթացներ սեռականության և ԼԳԲՏ անձանց հետ աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ:

Թիրախ խմբեր

- ՀՀ կառավարություն
- ՀՀ առողջապահության նախարարություն

Շահառուներ

- ԼԳԲՏ անձինք

Ընտանեկան բռնություն սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով

Համատեքստ և հիմնախնդիր

ԼԳԲՏ անձանց նկատմամբ ընտանեկան բռնությունը այն առանցքային խնդիրներից է, որն ունի համակարգային մոտեցման կարիք:

Այն դրսևորվում է ոչ միայն ծնողների, այլ նաև ընտանիքի այլ անդամների կողմից՝ ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական և տնտեսական բռնության տեսքով: Այս մասին ավելի հանգամանալից տեղեկատվություն հնարավոր է գտնել Փինք ՀԿ-ի տարեկան զեկույցներում[20]: Նման հանցագործությունից տուժողները, սակայն, հրաժարվում են բողոք ներկայացնել իրավապահ մարմիններին երկու հիմնական պատճառով. վստահության բացակայություն և իրավախախտման բնույթ: Մասնավորապես, ԼԳԲՏ անձինք չեն վստահում, որ իրենց անձնական կյանքի վերաբերյալ տեղեկատվությունը ոստիկանություն դիմելուց հետո չի տարածվի: Իսկ իրավախախտման բնույթից ելնելով անձը չի ցանկանում իր ընտանիքի անդամի դեմ հաղորդում ներկայացնել իրավապահ մարմիններին: Նման քայլը կարող է նաև հանգեցնել հետագա ավելի ծանր բռնությունների, ինչի կանխարգելման մեխանիզմներ իրավապահ մարմինների կողմից չի ապահովվում:

Ընտանեկան բռնության օրենքը[21] (ամբողջական անվանում՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենք, այսուհետ՝ ԸԲ օրենք) ընդունվել է 2017թ. դեկտեմբերին և ուժի մեջ է մտել 2018թ. դեկտմբերին: Այն կարգավորում է ընտանեկան բռնության կանխարգելման և ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության իրավական հիմքերը: Օրենքն առանձնացնում է ընտանեկան բռնության չորս տեսակ. ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական և սեռական: Այն նաև սահմանում է ընտանեկան բռնության ենթարկված անձի պաշտպանության երեք ուղիներ.

1) նախազգուշացում, որը տրվում է իրավախախտին առաջին անգամ իրավունքի խախտում իրականացնելու դեպքում,

2) անհետաձգելի միջամտության որոշում, երբ իրավախախտը պարտավորվում է առավելագույնը 20 օր չմոտենալ ընտանեկան բռնության ենթարկված անձին կամ հեռանում է բնակության վայրից և այլն,

3) պաշտպանական որոշում, երբ իրավախախտը պարտավորվում է առավելագույնը 6 ամիս չմոտենալ ընտանեկան բռնության ենթարկված անձին կամ հեռանում է բնակության վայրից և այլն:

Օրենքի իմաստով ընտանիքի անդամ է համարվում՝

ա. անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը (այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը), նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (նաև որդեգրված, խորթ, հոգեզավակ), որդեգրող ծնողի ամուսինը, ամուսնու ծնողները, նախկին ամուսնու ծնողները, բ. համատեղ բնակվող տատ, պապ, քույր և եղբայր (նաև համամայր կամ համահայր), ամուսնու քույր, ամուսնու եղբայր, ինչպես նաև ամուսնու ծնողների, քրոջ և եղբոր համար՝ փեսան և հարսը.

Չնայած նրան, որ ՀՀ օրենսդրությունը արգելում է նույնասեռ ամուսնությունները, սույն օրենքի իմաստով ամուսնության գրանցված լինելը պարտադիր չէ, բայցի այդ, ըստ արդարադատության նախարարության կողմից տրված պաշտոնական տեղեկատվության, արտերկրում օրենքով

[20] http://www.pinkarmenia.org/hy/publications/report/
[21] https://www.arlis.am/documentview.aspx?docID=118672

սահմանված կարգով գրանցված ամուսնությունները ճանաչվում են Հայաստանի Հանրպետության կողմից:

Ենթակետեր

1. ԸԲ օրենքը կիրառվում է նաև նույնասեռ զուգընկերների դեպքում:
2. ԸԲ օրենքում կատարվում է փոփոխություն, և «ամուսին» բառի փոխարեն գործածվում է «զուգընկեր» բառը:
3. Իրավապահ մարմինները որդեգրում են զուգընկեր չհանդիսացող ընտանիքի անդամի կողմից ընտանեկան բռնության զոհ դարձած անձանց պաշտպանության քաղաքականություն:

1. ԸԲ օրենքը կիրառվում է նաև նույնասեռ զուգընկերների դեպքում:

Նպատակ

ԸԲ օրենքի կիրառությունը տարածվում է նաև նույնասեռ զուգընկերների դեպքում:

Ենթանպատակներ

- Դատական նախադեպի միջոցով ընտանեկան բռնության մասին օրենքում կիրառված «ամուսին» բառը մեկնաբանվում է նաև որպես նույնասեռ ամուսին:

Թիրախ խմբեր

- Քաղաքացիական դատարան
- Քրեական դատարան

Շահառուներ

- ԼԳԲՏ անձինք
- Նույնասեռ զույգեր

2. ԸԲ օրենքում կատարվում է փոփոխություն և «ամուսին» բառի փոխարեն գործածվում է «զուգընկեր» բառը:

Նպատակ

ԸԲ օրենքում «ամուսին» բառը փոխարինվում է «զուգընկեր» բառով:

Ենթանպատակներ

- Արդարադատության նախարարությանը ընտանեկան բռնության մասին օրենքում փոփոխություն կատարելու առաջարկի ներկայացում՝ որպեսզի այն կիրառելի լինի նաև նույնասեռ ամուսինների դեպքում:

- Արդարադատության նախարարության կողմից փոփոխության նախագծի ներկայացում կառավարությանը:
- Կառավարության կողմից նախագծի հաստատում:
- Ազգային ժողովի կողմից է օրենքում փոփոխություն կատարելու վերաբերյալ նախագծի ընդունում:
- Մեկ այլ դեպքում Արդարադատության նախարարությունը տալիս է պաշտոնական պարզաբանում առ այն, որ «ամուսին» բառը վերաբերում է նաև նույնասեռ զույգերին:

Թիրախ խմբեր

- ՀՀ արդարադատության նախարարություն
- ՀՀ կառավարություն
- ՀՀ Ազգային ժողով

Շահառուներ

- ԼԳԲՏ անձինք
- Նույնասեռ զույգեր

3. Իրավապահ մարմինները որդեգրում են զուգընկեր չհանդիսացող ընտանիքի անդամի կողմից ընտանեկան բռնության զոհ դարձած անձանց պաշտպանության քաղաքականություն:

Նպատակ

Զուգընկեր չհանդիսացող ընտանիքի անդամի կողմից ընտանեկան բռնության զոհ դարձած անձինք ստանում են պատշաճ պաշտպանություն:

Ենթանպատակներ

- Իրավապահ մարմիններն անցնում են դասընթացներ՝ ԼԳԲՏ անձանց հետ աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ:
- Ոստիկանության որդեգրած նոր քաղաքականության համաձայն ընտանեկան բռնության զոհ դարձած ԼԳԲՏ անձանց կողմից ցանկացած զեկուցված դեպքից հետո վերահսկողություն է իրականացվում տուժողի նկատմամբ՝ ԸԲ օրենքով նախատեսված կարգով:

Թիրախ խմբեր

- ՀՀ ոստիկանություն

Շահառուներ

- ԼԳԲՏ անձինք

Գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց խնդիրները պարտադիր զինվորական ծառայության ընթացքում

Համատեքստ և հիմնախնդիր

ԳԲՏ անձինք, ըստ ՀՀ օրենսդրության, ենթակա են պարտադիր զինվորական ծառայության: Սա, սակայն հարցի օրենսդրական կարգավորման կողմն է: Գործնականում իրավիճակն այլ է: Զորակոչի տարիքի հասած ԳԲՏ անձինք զինվորական բժշկական հանձնաժողովում բախվում են մի շարք խնդիրների: Իրենց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության մասին պարզ դառնալու դեպքում խախտվում է արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ լինելու իրավունքը, մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը, որը, նախ և առաջ, արտահայտվում է վիրավորական, նվաստացուցիչ արտահայտություններով, վերաբերմունքով, ինչից հետո հոգեբանը կամ հոգեբույժը փորձում են պարզել անձանց սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը:

Անձի նույնասեռական, երկսեռական կամ տրանսգենդեր լինելու հանգամանքը «պարզելու» վերաբերյալ եզրակացության դեպքում նա ազատվում է զինվորական ծառայունից ՀՀ ՊՆ 2013 թ. 410-Ն հրամանգրի 8գ կետի, որը նախատեսում է զինվորական ծառայությունից ազատում սեռական կողմնորոշան հետ կապված շեղման համար: Սա ինքնին չի ներառում նույնասեռականությունը, սակայն համարվում է հոգեկան առողջության խնդիր և հետագայում առաջացնում է խոչընդոտներ այլ իրավահարաբերություններում, ինչպիսիք են վարորդական իրավունքի ձեռք բերումը, որոշակի պաշտոններ զբաղեցնելը և այլն:

Հաջորդ խնդիրն առաջանում է զինվորական ծառայության ընթացքում անձի սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության բացահայտման դեպքում: Արձանագրված որոշ դեպքերում[22] հարուցվել է քրեական գործ պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից խուսափելու հանցակազմով, ինչի շրջանակներում անձի սեռական կողմնորոշման վերաբերյալ հարցաքննվել են իր ընտանիքի անդամները՝ խախտելով մասնավոր կամ ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը, իսկ ինքը ենթարկվել է դատաբժշկական փորձաքննության, ինչն ինքնին կարող է գնահատվել որպես խոշտանգումներից, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի խախտում: Որոշ դեպքերում, որտեղ քրեական գործ չի հարուցվել, անձը ենթարկվել է անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի հրամանատարական կազմի կողմից:

Միևնույն ժամանակ նման դեպքերում ԳԲՏ անձինք մեկուսացվում են համածառայակիցներից, նրանց տրամադրվում է առանձին սպասք, իսկ սնունդից նրանք պետք է օգտվեն մեկուսացված վայրում: ՀՀ ամբողջ տարածքից ԲԳՏ անձինք մեկուսացվում են երկու զինվորական հոսպիտալների տարածքում, որտեղ թիրախավորվում են ոչ միայն հոսպիտալի աշխատակիցների, այլ նաև հարակից շրջանների բնակիչների կողմից:

Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունը հոսպիտալում շարունակելու իրավաչափության վերաբերյալ պաշտոնական հարցմանն ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ զինվորական ծառայության ընթացքում անձի սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության բացահայտման դեպքում պետք է հրավիրվի լրացուցիչ զինվորական հանձնաժողով, որը կորոշի, թե արդյոք առկա է զինվորական ծառայությունից անձի ազատման հիմք: Այդ ընթացքում անձը պահվում է հոսպիտալի տարածքում: Պրակտիկայում, սակայն, զինվորական հանձնաժողով այդպես էլ չի հրավիրվում, զինծառայողները իրենց ծառայությունն անցկացնում են հոսպիտալների տարածքներում՝ խտրականացված պայմաններում՝ փաստացի չիրականացնելով զինվորական ծառայություն:

[22] Փինք ՀԿ, ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում. 2016
http://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2017/07/2016annualreview_hy.pdf

Տրանսգենդեր անձինք համարվում են հոգեկան առողության խնդիր ունեցող անձինք, ինչի հիման վրա ազատվում են զինվորական ծառայությունից:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից մշակված դասակարգման համաձայն 2018 թ-ից տրանսգենդեր լինելը այլևս հոգեկան առողջության խնդիր չի համարվում: ՀՀ օրենսդրությունը ևս պետք է համապատասխանեցվի այս դասակարգմանը, ինչը նշանակում է, որ տրանսգենդեր անձինք ենթակա կլինեն պարտադիր ժամկետային զինվորական ծառայության: Այդ դեպքում արդեն պետք է հաշվի առնվի անձի գենդերային ինքնությունը, քանի որ, համաձայն ՀՀ օրենսդրության, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ենթակա են միայն արական սեռի ներկայացուցիչները:

Ենթակետեր

1. ՊՆ որդեգրած քաղաքականության համաձայն սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը չեն ախտորոշվում որպես հոգեկան առողջության խնդիր՝ պարտադիր զինվորական ծառայության ենթակայության հարցը քննարկելիս:
2. Տրանսգենդեր կանայք ազատվում են պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից:
3. Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում ապահովվում է ԳԲՏ անձանց իրավունքների նկատմամբ հարգանք:

1. ՊՆ որդեգրած քաղաքականության համաձայն սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը չեն ախտորոշվում որպես հոգեկան առողջության խնդիր՝ պարտադիր զինվորական ծառայության ենթակայության հարցը քննարկելիս:

Նպատակ

ԳԲՏ անձինք չեն ախտորոշվում որպես հոգեկան առողջության խնդիր ունեցող՝ պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից ազատվելու համար:

Ենթանպատակներ

- Զինվորական հանձնաժողովների անդամների և բժիշկ մասնագետների համար անցկացվում է վերապատրաստում՝ գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր տղամարդ զորակոչիկների հետ աշխատանքի վերաբերյալ:
- ՀՀ պաշտպանության նախարարությունը որդեգրում է քաղաքականություն՝ ԳԲՏ անձանց չազատել պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից որպես հոգեկան առողջության խնդիր ունեցող անձ:

Թիրախ խմբեր

- ՀՀ պաշտպանության նախարարություն
- ՀՀ առողջապահության նախարարություն

Շահառուներ

- ԳԲՏ զորակոչիկներ

2. Տրանսգենդեր կանայք ազատվում են պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից:

Նպատակ

Տրանսգենդեր կանայք ազատվում են պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից՝ իրենց գենդերային ինքնության հիմքով:

Ենթանպատակներ

- Պաշտպանության նախարարությանը առաջարկ է ներկայացվում «Զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարել լրացում, համաձայն որի, անձը դիմում է ներկայացնում իր գրանցման վայրի զինվորական հանձնաժողով՝ իրեն զորակոչիկների ցուցակից հանելու համար՝ ներկայացնելով «Գենդերի իրավական ճանաչման մասին» օրենքով սահմանված կարգով ստացված հավաստագիրը:
- Կառավարությունը հաստատում է «Զինվորական ծառայության մասին» օրենքում կատարված լրացման նախագիծը:
- Ազգային ժողովը ընդունում է «Զինվորական ծառայության մասին» օրենքում կատարված լրացումը:

Թիրախ խմբեր

- ՀՀ պաշտպանության նախարարություն
- ՀՀ կառավարություն
- ՀՀ Ազգային ժողով

Շահառուներ

- Զորակոչի տարիքի հասած տրանսգենդեր կանայք

3. Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում ապահովվում է ԳԲՏ անձանց իրավունքների նկատմամբ հարգանք:

Նպատակ

Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում ԳԲՏ անձանց իրավունքները չեն ոտնահարվում:

Ենթանպատակներ

- Իրականացվում է հետազոտություն զինվորական ծառայության ընթացքում ԳԲՏ անձանց պահման պայմանների, մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ առավել համապատասխան և փաստերի վրա հիմնված տեղեկություն ստանալու համար:

- Կազմակերպվում է հանդիպում Առողջապահության նախարարության և Պաշտպանության նախարարության հետ՝ ներկայացնելով առաջարկները, քննարկելով հնարավոր լուծումները:
- Տրանսգենդեր տղամարդիկ «Գենդերի իրավական ճանաչման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով գենդերի փոփոխության գործընթաց անցնելուց հետո հաշվառվում են որպես զինակոչի ենթակա անձ և զինակոչի տարիքի լինելու դեպքում կանչվում են զինվորական կոմիսարիատ:

Թիրախ խմբեր

- ՀՀ պաշտպանության նախարարություն
- ՀՀ առողջապահության նախարարություն
- Զինվորական կոմիսարիատ

Շահառուներ

- ԳԲՏ զինծառայողներ

Քրեակատարողական հիմնարկներում պայմաններ ԼԳԲՏ անձանց համար

Համատեքստ և հիմնախնդիր

Քրեակատարողական հիմնարկների պայմանների՝ մարդու իրավունքների հարգման չափորոշիչներին անհամապատասխանության վերաբերյալ մշտադիտարկում իրականացնող խմբերի հատուկ ուշադրության առարկան է դառնում խոցելի խմբերի իրավիճակը, որոնք պահվում են այլ բանտարկյալների համեմատ անբարենպաստ պայմաններում:

Նույնասեռական անձինք քրեակատարողական հիմնարկներում ենթարկվում են խտրականության և խարանի՝ իրենց սեռական կողմնորոշման հիմքով: Ըստ ՄԱԿ-ի կողմից պատրաստված ձեռնարկի՝ ԼԳԲՏ անձինք առավել խոցելի են այն առումով, որ հաճախ ենթարկվում են սեռական շահագործման և չեն ունենում հասանելիություն փաստաբանական և հոգեբանական ծառայությունների[23]:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական մարմինը յուրաքանչյուր տարի հրապարակում է տարեկան զեկույց, որում անդրադարձ է կատարվում նաև ԳԲՏ անձ հանդիսացող դատապարտյալների պահման պայմանների առանձնահատկություններին: 2017թ-ի զեկույցում, մասնավորապես, նշվում է. «Առաջին և ամենատեսանելի խտրական վերաբերմունքը ի հայտ է գալիս նույնասեռական անձանց խոցելի խմբերի համար նախատեսված խցերում պահելու փաստով, որոնք գրեթե բոլոր ՔԿՀ-ներում գտնվում են անբարենպաստ պայմաններում, այն է՝

- Կոտրված ապակիներով պատուհաններ (օրինակ՝ «Նուբարաշեն» ՔԿՀ)
- Անսարք վարդակներ
- Անկայուն սենյակային ջերմաստիճան
- Ոչ հիգիենիկ վիճակ - Կոտրված մահճակալներ
- Ամբողջովին չվերանորոգված խցեր:»[24]

Ըստ քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների՝ նույնասեռական անձինք այդ խցեր են տեղափոխվում իրենց դիմումի հիման վրա՝ իրենց անվտանգության ապահովման նպատակով՝ պաշտպանվելու համար այլ դատապարտյալների կողմից դրսևորվող սեռական բռնություններից և շահագործումներից: Համաձայն ՔԿՀ-ների աշխատակիցների՝ դատապարտյալներն ու կալանավորները ցանկություն չունեն «նման» մարդկանց հետ շփվել և օգտվել նույն սպասքից: Բանտային չգրված օրենքների համաձայն, եթե հետերոսեքսուալ անձը շփվում է նույնասեռական անձի հետ, ապա նա «կոտրվում» է և զրկվում է «նորմալ մարդ» կարգավիճակից: Այս հանգամանքները առավել խոցելի են դարձնում տվյալ խմբի ներկայացուցիչներին և հետագայում կարող են բերել հասարակություն վերահնտեգրման բարդությունների: Հարկ է նշել նաև, որ ՔԿՀ-ներում նման վերաբերմունքի են արժանանում ոչ միայն նույնասեռականները, այլ նաև տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցած անձինք (ՏՍՏ):

Այսպիսով, հաշվի առնելով քրեակատարողական հիմնարկներում տիրող իրավիճակն ու պայմանները, որոնք ունեն հիմնային փոփոխության կարիք՝ համակարգային մոտեցմամբ, այնուամենայնիվ գտնում ենք, որ ԼԳԲՏ անձանց իրավիճակի բարելավման և մարդու իրավունքների խախտումների դադարեցման և կանխման ուղղությամբ անհրաժեշտ է ձեռնարկել առանձնահատուկ միջոցներ:

---

[23] UN Office on Drugs and Crime, Handbook on Prisoners with special needs, 2009

[24] ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ http://pmg.am/images/PMG_Annual-report_2017.pdf

Ենթակետեր

1. Պետությունը ապահովում է քրեակատարողական հիմնարկներում գեյ, բիսեքսուալ տղամարդկանց և տրանսգենդեր անձանց մարդու իրավունքների հարգման պարտավորությունը:
2. Պետությունն ապահովում է ԼԳԲՏ անձանց պաշտպանություն այլ դատապարտյալներից:
3. Սեռական բռնության կամ այլ ոտնձգությունների զոհ դարձած ԼԳԲՏ անձինք հասանելիություն ունեն փաստաբանական, հոգեբանական և սոցիալական աշխատողի ծառայությունների:
4. Քայլեր ձեռնարկել քրեակատարողական հիմնարկներում նույնասեռական և բիսեքսուալ կանանց և տրանսգենդեր անձանց իրավիճակի բարելավման ուղղությամբ:

1. Պետությունը ապահովում է քրեակատարողական հիմնարկներում գեյ, բիսեքսուալ տղամարդկանց և տրանսգենդեր անձանց մարդու իրավունքների հարգման պարտավորությունը:

Նպատակ

ԳԲՏ անձինք ՔԿՀ-ներում պահվում են այնպիսի պայմաններում, որն ուղղակիորեն մարդու իրավունքների խախտում չի հանդիսանում:

Ենթանպատակներ

- ԳԲՏ անձանց համար նախատեսված խցերը բարեկարգվում են
- ՔԿՀ-ների աշխատակիցները անցնում են դասընթացներ՝ ԼԳԲՏ անձանց հետ աշխատանքի և խնդիրների առանձնահատկությունների վերաբերյալ

Թիրախ խմբեր

- ՀՀ արդարադատության նախարարություն
- ՔԿՀ աշխատակիցներ

Շահառուներ

- ԳԲՏ դատապարտյալներ
- ՏՍՏ դատապարտյալներ

2. Պետությունն ապահովում է ԼԳԲՏ մարդկանց պաշտպանություն այլ դատապարտյալներից:

Նպատակ

ԼԳԲՏ անձանց նկատմամբ սեռական և այլ ոտնձգությունները այլ դատապարտյալների կողմից բացառվում են.

- ՀՀ Քրեական օրենսգրքի համաձայն ԼԳԲՏ անձանց նկատմամբ սեռական կամ այլ ոտնձգություն թույլ տված դատապարտյալների հանդեպ կիրառվում է ծանրացնող հանգամանք՝ արարքը տուժողի սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված կատարելը:
- ՔԿՀ աշխատակիցները ենթարկվում են պատասխանատվության որպես հանցակից՝ ԼԳԲՏ անձանց այլ դատապարտյալների խցեր դիտավորյալ տեղափոխելու դեպում:

Թիրախ խմբեր

- Գործի քննություն իրականացնող հետաքննության մարմին
- ՀՀ քննչական կոմիտե
- ՀՀ դատախազություն

Շահառուներ

- ԼԳԲՏ դատապարտյալներ
- ՏՍՏ[25] և ԿՍԿ[26] դատապարտյալներ

3. Սեռական բռնության կամ այլ ոտնձգությունների զոհ դարձած ԼԳԲՏ անձինք հասանելիություն ունեն փաստաբանական, հոգեբանական և սոցիալական աշխատողի ծառայությունների:

Նպատակ

ՔԿՀ-ներում սեռական բռնության կամ այլ ոտնձգությունների զոհ դարձած ԼԳԲՏ անձինք հասանելիություն ունեն փաստաբանական, հոգեբանական և սոցիալական աշխատողի ծառայությունների, որոնք կտրամադրեն մասնագիտական աջակցություն՝ զերծ խարանից և խտրականությունից:

Ենթանպատակներ

- Փաստաբանները, հոգեբանները և սոցիալական աշխատողները անցնում են հատուկ վերապատրաստում՝ ՔԿՀ-ներում ԼԳԲՏ անձանց խնդիրների առանձնահատկությունների և նրանց հետ աշխատանքի նրբությունների վերաբերյալ:
- ՔԿՀ-ները համագործակցում են իրավապաշտպան կազմակերպությունների հետ՝ անհրաժեշտության դեպքում ստանալու փաստաբանի, հոգեբանի և սոցիալական աշխատողի աջակցություն, որն ունի տվյալ խմբի հետ աշխատանքի կարողություն:

Թիրախ խմբեր

- ՔԿՀ աշխատակիցներ
- ՀՀ փաստաբանների պալատ
- ՀՀ արդարադատության նախարարություն

[25] տղամարդ, որը սեռական հարաբերություն է ունենում տղամարդու հետ
[26] կին, որը սեռական հարաբերություն է ունենում կնոջ հետ

Շահառուներ

- ԼԳԲՏ դատապարտյալներ
- ՏՍՏ և ԿՍԿ դատապարտյալներ

4. Քայլեր ձեռնարկել քրեակատարողական հիմնարկներում նույնասեռական և բիսեքսուալ կանանց և տրանսգենդեր անձանց իրավիճակի բարելավման ուղղությամբ:

Նպատակ

Նույնասեռական ու բիսեքսուալ կանանց և տրանսգենդեր անձանց իրավունքները պաշտպանված են քրեակատարողական հիմնարկներում:

Ենթանպատակներ

- Քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում մշտադիտարկում իրականացնող խումբը ուսումնասիրում է նաև նույնասեռական և բիսեքսուալ կանանց ու տրանսգենդեր անձանց իրավիճակը:
- Մշակվում են քայլեր ՔԿՀ-ներում ԼԲ կանանց ու տրանսգենդեր անձանց իրավիճակի բարելավման ուղղությամբ:

Թիրախ խմբեր

- Քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում մշտադիտարկում իրականացնող խումբ

Շահառուներ

- ԼԲՏ դատապարտյալներ
- ԿՍԿ դատապարտյալներ

Հավելված

Տարեկան զեկույցներ - Փինք՝
2017թ. http://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2018/07/2017annualreview_hy.pdf
2016թ. http://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2017/07/2016annualreview_hy.pdf
2015թ. http://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2016/05/2015-annual-report-hy.pdf
2014թ. http://www.pinkarmenia.org/publication/2014lgbtsitrep_hy.pdf
2013թ. http://www.pinkarmenia.org/publication/2013%20annual%20report%20arm.pdf

Հետազոտություն - Նախապաշարումներից Հավասարություն, Փինք, 2016թ.՝
http://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2016/06/From-Prejudice-to-Equality-Armenian.pdf

Տարեկան զեկույց - Խտրականության դեմ պայքարի կոալիցիա, 2016թ.՝ http://www.havasar.am/wp-content/uploads/2018/07/NDEC-Research-on-Discrimination_M-Yeranosyan-and-A-Simonyan.pdf

Հետազոտություն - ԼԳԲՏ անձանց հանդեպ ատելության հիմքով հանցագործություններն ու ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումները Հայաստանում, Փինք, 2016թ.՝
http://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2016/11/hate-crime-monitoring-2016_hy.pdf

Pew Research Center http://www.pewforum.org/2017/05/10/social-views-and-morality/

Հետազոտություն - Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության և բռնության դեպքերը ՀՀ բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, Հասարակություն առանց բռնության, 2018թ. http://www.swv.am/index.php/hy/what-we-do-am/publications-am/1192-2018-08-09-09-45-30

Տարեկան զեկույց - ՄԻՊ, 2017թ.
http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/b5220dd0b83b420a5ab8bb037a1e02ca.pdf

Տարեկան զեկույց - Հյումըն Ռայթս Վոչ, 2018թ. https://www.hrw.org/world-report/2018

Տարեկան զեկույց - Հյումըն Ռայթս Վոչ, 2019թ. https://www.hrw.org/hy/world-report/2019/country-chapters/326187

Տարեկան զեկույց - ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների Խումբ, 2017թ. http://pmg.am/images/PMG_Annual-report_2017.pdf

Հետազոտություն - ՀՀ կրթական հաստատություններում արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունք և բռնություն (bullying/բուլիինգ), Փինք, 2017թ.
http://www.pinkarmenia.org/hy/news/dos2017/

Տարեկան զեկույց - ԱՄՆ պետքարտուղարություն, 2017թ.
https://www.state.gov/j/drl/rls/hrrpt/humanrightsreport/index.htm

Հետազոտություն - Նվազ հավասար. ԼԳԲՏԻ իրավապաշտպանները Հայաստանում, Բելառուսում, Ղազախստանում և Ղրղզստանում, Ամնեսթի Ինթերնեյշընալ, 2017թ.
https://www.amnestyusa.org/reports/less-equal-lgbti-human-rights-defenders-in-armenia-belarus-kazakhstan-and-kyrgyzstan/

Հետազոտություն - Տրանսգենդեր անձնանց սեռափոխության կարիքները. Իրավական խոչընդոտների գնահատում - Նոր սերունդ մարդասիրական ՀԿ, 2016թ.

Հետազոտություն - Հասարակություն առանց բռնության ՀԿ, Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության և բռնության դեպքերը ՀՀ բարձրագույն և միջին ուսումնական հաստատություններում
http://swv.am/attachments/article/1192/report%20ILGA%20%20final%20digital.pdf